Արցախն իր որդիներից տուն է կանչում

Այսօր մեկ միլիոնից ավելի ղարաբաղցիներ են ապրում դրսում:

Արամը հայրական տան կողմը նայել չի կարողանում, ամաչում է... Աչքին պատկերվում է հոր դեմքը, հայացքում նախատինք. «Ինչո՞ւ անտեր թողեցիք տունս. ո՞ւր եք, որտե՞ղ եք, ո՞ւր...»:

Երեք եղբայր «շահացան» թռչնի պես թռան հեռուներ, օտար ափերում, օտար երկնքի տակ տուն շինեցին... Հոր մահից հետո մայրը շատ թախանձեց, որ գոնե նրանցից մեկը վերադառնա, տիրություն անի հայրական տանը, շարունակի իր օջախի ծուխը ապարդյուն: Մայրն էլ մահկանացու էր, մի օր հոգին ավանդեց Աստծուն: Իսկ տունը, հայրական օջախը ...

Հյուսիսային Կովկասի քաղաքներից մեկում Արամն ունի երեք զավակ: Բոյ-բուսաթով, իգիթ տղաներ: Ազգանվան վերջին վանկը «յան», անուններն էլ Հայկ, Հակոբ, Հարութ եւ... հայերեն մի բառ չգիտեն: Ապրում են անհոգ, հագնվում նորածեւ, ունեն սեփական ավտոմեքենաներ... Լավ մասնագետներ են, լավ էլ վաստակում են: Նրանք իրենց համար կան, իրենց կյանք տված ազգի համար ոչ: Նրանք կամավոր իրենց տալիս են սպիտակ եղեռնի բերան...

Այսօրվա մեր կյանքի արհավիրքներին շատերը չդիմացան: Նրանք թողեցին տուն ու տեղ, հեռացան հայրենիքից, հեռուներում գտան խաղաղ մի ապաստան եւ մոռացան հետդարձի ճամփան: Ու այսօր էլ ինչ-ինչ ճանապարհներով քաշում-տանում են Արցախում մնացած իրենց բարեկամներին, ընկերներին: Այո, քիչ չեն նրանք, ովքեր Արցախից հեռանալու ելք են փնտրում: Հեռանալ Արցախից ու այլեւս չվերադառնալ համազոր է դասալքության:

Տասնամյակներ շարունակ բարոյական կտտանքների ենթարկված եւ տնտեսապես կեղեքված մեր փոքր Արցախը այսօր արյան գնով ձեռք է բերել իր անկախությունը: Այդ անկախությունը պետք է ամրապնդել հայորդիների միացյալ ուժերով, օտար եզերքներում սփռված զավակների տունդարձով: Այսօր Արցախում քայքայված ու լիովին լքված են շատ գյուղեր: Կան նաեւ գյուղեր, որ քայքայման եզրին են կանգնած: Խիստ պակասել է գյուղական բնակիչների թիվը: Ինչքա՜ն ծերացած ծնողներ են սպասում իրենց որդիների վերադարձին: Արցախն օտար ափերում սփռված իր որդիներին տուն է կանչում: Պետք է լավ իմանալ, որ հայրենի հողի բարգավաճումը, նրա շենացումը պայմանավորված է այդ մոլորված որդիների վերադարձով: Տունն ամուր է լինում իր զավակներով: Արցախը սպասում է Բաքվից, Սումգայիթից, Ադրբեջանի մյուս քաղաքներից ու այլ բնակավայրերից թուրք ելուզակների ճանկերից փախած, դռնեդուռ ընկած իր հայ զավակներին: Չէ՞ որ նրանք հիմնականում արցախցիներ են, նրանցից ամեն մեկը Արցախում ունի իր գյուղը, իր տունը, իր պապերի գերեզմանները, իր արմատները... Մենք նրանց չենք ուզում փախստական կոչել: Արցախ վերադարձողներին մենք հայրենադարձ ենք կոչում:

Այսօր Հյուսիսային Կովկասի հայկական համայնքներին կից ստեղծվել են «Արցախ» հայրենակցական միություններ, որոնք հավաքագրում են Արցախից տեղահան եղած հայերին, օգնում նրանց վերադառնալ հայրենի օջախները: Միայն Կրասնոդարի երկրամասի եւ Ազով-Սեւծովյան հայ համայնքների համակարգիչ խորհուրդների եւ դրանց կից «Արցախ» հայրենակցական միությունների օգնությամբ 1996թ. հունվարից մինչեւ 1998թ. նոյեմբերը Արցախ, իրենց հայրենի օջախներն են վերադարձել 200-ից ավելի արցախցիներ, հիմնականում Մարտակերտի շրջանից: Այո, սկսված է վերադարձը: Սակայն դեռեւս քչերն են վերադառնում: Այսպես, Նովոռոսիյսկ քաղաքում ու նրա հարակից գյուղերում հազարից ավելի տեղահան եղած հայեր են բնակվում: Ճիշտ է, նրանք վերադառնում են, բայց... հիմնականում վաթսունն անց մարդիկ: Չգիտեմ ինչու, երիտասարդները չեն ուզում վերադառնալ Արցախ: Նրանք այդ օտար ափերում, օտար երկնքի տակ կատարում են ամեն տեսակ սեւ աշխատանք, զբաղվում «մաքոք» առեւտրով, հարմարվում տեղի բարքերին: Արցախցին այս օրերին իրավունք չունի ուրիշ տեղ ապրելու, միայն իր ֆիզիկական գոյատեւման մասին մտածելու: Չպետք է ժամանակավոր դժվարություններից հուսահատ լինել: Այսօր կարեւորը եւ ամենագլխավորն այն է, որ մենք ձեռք ենք բերել մեր անկախությունը: Դա փաստ է: Շատ հավանական է, որ արյան գնով ձեռք բերած մեր այս անկախության ամրապնդման ճանապարհին եւ դժվարությունների, եւ զրկանքների դեռ շատ կհանդիպենք:

Այսօր մեր Արցախ աշխարհում խաղաղություն է տիրում: Այդ խաղաղությունը, նաեւ մեր անվտանգությունը պաշտպանում են Արցախի զինված ուժերը: Մեր տղաները միշտ պատրաստ են ամուր պահել մեր անկախությունը: Մենք պետք է նոր շունչ տանք Դիզակին, Վարանդային, Խաչենին, Զրաբերդին, Գյուլիստանին մեր պատմական աշխարհին, որ նորից ծաղկեն մեր գյուղերն ու ավանները, մեր քաղաքները, նորից մանկան ծնունդ լինի, անքանակ օրորոցներ լինեն, բազում հարսանիքներ որպես ապագույց հարատեւության: Կրկին ձեզ եմ դիմում, Արցախից հեռացած հայ զավակներ, վերադարձեք պապենական ձեր օջախները, նոր տուն հիմնեք, հայերեն մտածող ձեր որդիները թող խոսեն հայերեն, հաճախեն հայկական դպրոց: Օտարության մեջ գտնվող Արցախի հայարյուն որդիներ, եղեք ձեր ապուպապերի արժանի հետնորդներ, ուղղեք հայրենիքից հեռացածների սխալները եւ օտար ափերից տուն վերադարձեք:

Մենք մեր Արցախ աշխարհում պետք է շատանանք եւ բազմանանք, այստեղ հարատեւենք:

Ոմանց համար միամիտ ու մեր դժվարին կյանքի իրողությունից կտրված կոչեր կարող են թվալ տոգրվող նյութերը: Ավելորդ հուզառաս խոսք, որն ընդամենը վայրկենական զգացողություն կարող է առաջացնել ու հետո առնվազն մեղմ ժոիտով (եթե ոչ խծիծաղով) վերհիշվել: Իրավացի կլինի նման ընթերցողը՝ թե ոչ, այլ հարց է:

Կյանքն է դարձադրում ազգովին որոշել՝ կա՛մ հետեւել ցեղի առողջ կանչին ու դահիճանել ունեցածը, կա՛մ զիջել առավել կենսունակներին ու ասիճանաբար մարել: Միջինը չկա: Մեր սերնդի գերխնդիրը լուծելու միջոցները նախեւառաջ հայոց երկու դեսությունները դիտի գտնեն: Կենսադայման՝ էությամբ հայ մարդու համար եւ վստահություն՝ վաղվա օրվա հանդեմ. ավելին դեսք չէ, մնացածը ինքնին կստեղծվի: Իսկ խծիծաղող ցինիկները... Նրանք աշխարհաքաղաքացիներ են, ուրեմն՝ աշխարհն է նրանցը. չխանգարենք նրանց կյանքին:

«ԵՐԿԻՐ»